ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, հեռ. 010-596-125

№ 12/141 «03» 04 2026 թ.

«Գեոգլոբալ» ՍՊ ընկերություն
(ՀՎՀՀ 00491374)
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նոր Նորք, Կարախանյան փ. 36 շենք, բն. 23
Հեռ.՝ +374 99 39 09 47, էլ.հասցե՝ igitkhanyanzaven@gmail.com

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին

ՀՀ ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և «Գեոգլոբալ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Կատարող) միջև 2026 թվականի փետրվարի 27-ին «ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-Ա-20/2026-1» ծածկագրով «շենքերի չափագրման» ծառայությունների ձեռքբերման նպատակով կնքված գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Կատարողը պարտավոր էր Պատվիրատուի մոտ անհրաժեշտությունն առաջանալուց և համապատասխան ծանուցումը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում մատուցել (ԳՄԱ կոդ՝ 71311360/1) «շենքերի չափագրման» ծառայություններ, սակայն սահմանված ժամկետում այն չի իրականացրել:

Համաձայն Պայմանագրի 2.1.3 կետի՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Ելնելով վերոգրյալից և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետով, ինչպես նաև Պայմանագրի 7.9-րդ կետով՝ ՀՀ ներքին գործերի նախարարությունը միակողմանի լուծում է ՀՀ ներքին գործերի նախարարության և «Գեոգլոբալ» ՍՊ ընկերության միջև 2026 թվականի փետրվարի 27-ին կնքված «ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-Ա-20/2026-1» ծածկագրով պայմանագիրը: Պայմանագիրը կհամարվի ամբողջությամբ միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

«Գեոգլոբալ» ՍՊ ընկերությանը տրվում է 5 օրացուցային օր՝ տուժանքի մասին համաձայնագրի վճարման պահանջագրերով սահմանված գումարները փոխանցելու համար՝ 525,000 (հինգ հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամը՝ որպես որակավորման ապահովում, և 350,000 (երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը՝ որպես պայմանագրի ապահովում, ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության համապատասխանաբար «900008000698» և «900008000664» գանձապետական հաշվեհամարներին:

Բացի այդ, անհրաժեշտ է փոխանցել նաև Պայմանագրի 5.2 կետով սահմանված տուգանքը, որը կազմում է 17,500 (տասնյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, ինչպես նաև 5.3 կետով սահմանված տույժը՝ 2 (երկու) աշխատանքային օրերի համար, որը կազմում է 3,500 (երեք հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ՝ ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության N 900005028106 հաշվեհամարին:

Վճարման կտրոնների բնօրինակներն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ներքին գործերի նախարարություն՝ ք. Երևան, Նալբանդյան 130 հասցեով /ՏՎ ԳՀ բաժին/:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում «Գեոգլոբալ» ՍՊ ընկերությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն, կներգրավվի գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթացում, որի նպատակով ընկերության տվյալները կներկայացվեն լիազոր պետական մարմին:

Միաժամանակ, Կատարողի կողմից Պայմանագրի շրջանակում տուժանքի մասին համաձայնագրերի տեսքով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումները սահմանված կարգով կներկայացվեն «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲ ընկերություն՝ վերոնշյալ գումարները գանձելու նպատակով:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

Խ. ԻԳԻԹՅԱՆ

ՀՀ ՆԳՆ ՏՎ ԳՀ բաժին
Կատարող՝ Ա. Աբասյան
Հեռ.՝ 010-59-60-39